

Կ'ընդունումարեմ արտեւանները ցըցուն
 Մանիշակէ լեռներուն
 Մարմաշի մէջ պլլուած
 Հսկայ հարսեր հեշտամոլ՝
 Որոնց տարփանքը կըզգաս
 Հեռուներէն, հեռուներէ՛ն...
 Ու կը լըսեմ վարերէն թելճակներու նըւագն ալ,
 Ջուրերուն վրայ թըրթըռուն,
 Ու կը լըսեմ ծաղիկներուն ալ երգը
 Աղաղակ մը սիրածուփ՝
 Սահած ծոցէն դաշտերուն՝
 Ուր ցաները կը վէտվէտին սիրատարփ:
 Ուր երկինքն ալ կը քնանայ,
 Կապոյտներու խորհուրդին մէջ երագելով
 Վաղորդայններն երջանիկ:

31. ԱՐԵՒԻՆ

Հարաւի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
 Որ վաղուց երագուած համբոյրի մը պէս
 Իմ սիրակարօտ հոգիս հեշտանքով կը լիացնէ,
 Շողա՛, ո՛վ արեւ, շառափներովդ ոսկեծայր,
 Մառախլապատ երկունքիս մէջ՝
 Ուր Մտածումը կը դեգերի ուղեմուլար,
 Շողա՛, շողա՛, բարի՛ արեւ, հիւանդ եմ...
 Պատուհանիս հեղուկ ծոցին մէջ ինկած խելայեղ,
 Միջօրէի հեշտադալար ու բոցակապ երագին գիրկը,
 Թեւատարած կըսպասե՛մ.
 Պլլե՛ գիս բոցեղէն ցանցերուդ մէջ
 Ու օրօրե՛ ջերմագին
 Ու կիզանուտ համբոյրիդ տակ.
 Թող հոգոյս մէջէն 1[1]անցնին կարգաւ
 Մանուկներն ընդարմացած:
 Մինչեւ որ
 Կանգնիմ նորէն ու անցնի՛մ դարձեալ
 Տարփանքիս խանդաղատ ճամբաներէն:
 Հիւանդ եմ, բարի՛, արեւ, շողա՛, շողա՛...
 Հոգիս թռչնիկ մըն է,